Ուժի մեջ է 2026թ. հունիսի 8-ից

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն

Հ. Անդրեասյան_____

8 հունիսի 2026թ.

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից կենսաթոշակառուների սպասարկման համար գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):

2. Սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում, Բանկի տարածքում հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:

3. Բանկը հաճախորդներին ծառայություններ է մատուցում աշխատանքային օրերին[1]՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-17:30 («Հոմպլեքս Մոլ» մասնաճյուղում՝ բոլոր օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 10:00-22:00), բացառությամբ հետևյալ դեպքերի.

- մասնաճյուղերի կողմից ծառայությունների դիմաց վճարումների ընդունում և հաշվարկադրամարկղային սպասարկում՝ աշխատանքային օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-16:30-ը («Հոմպլեքս Մոլ» մասնաճյուղում՝ բոլոր օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 10:30-21:30):
- հեռահար՝ acba digital համակարգով և ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի (այսուհետ՝ ՖԳԻԱՍ) միջոցով ծառայությունների մատուցում՝ ցանկացած օր՝ առանց ժամային սահմանափակման, եթե տվյալ գործարքի կատարման համար Բանկի ներքին ընթացակարգերով այլ սահմանափակում նախատեսված չէ:
- ինչպես նաև, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմաններում, պայմանագրերում, Բանկի ներքին իրավական ակտերում կամ www.acba.am Բանկի պաշտոնական կայքում:

Բանկում գործառնությունների ձևակերպման համար գործառնական օր են համարվում երկուշաբթիից կիրակի օրերը՝ ժամը 9:00-ից 22:00-ը:

4. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

[1] Աշխատանքային օրեր՝ երկուշաբթիից ուրբաթ օրերը (բացառությամբ այն օրերի, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն ոչ աշխատանքային օրեր), ինչպես նաև այն օրերը, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն աշխատանքային օրեր:

Հ/Հ	Ծառայության տեսակը	Առավելագույն սակագինը
1.	Ընթացիկ (քարտային) հաշվի բացում և սպասարկում	անվճար
2.	Քարտերի թողարկում և տրամադրում	անվճար
3.	Ընթացիկ (քարտային) հաշվից միջոցների կանխիկացում (ԱԿԲԱ ԲԱՆԿԻ սպասարկման կետերում)	անվճար
4.	Քարտային հաշվից միջոցների կանխիկացում (այլ բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող սպասարկման կետերում)	0.5%
5.	Քարտի բլոկավորում և ապաբլոկավորում (քարտապանի պահանջով)	անվճար
6.	Քարտի ՊԻՆ կոդի վերականգնում/փոփոխություն	անվճար
7.	Բանկոմատի միջոցով քարտի առգրավման դեպքում (ԱԿԲԱ ԲԱՆԿԻ և այլ բանկերի սպասարկման կետերում) քարտի վերադարձ	անվճար
8.	Քարտի փոխարինում	անվճար
9.	Քարտային գործարքների վերաբերյալ ամսական քաղվածքի տրամադրում	անվճար
10.	Անկանխիկ վճարումներ	անվճար
11.	Քարտային հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%
12.	Գերածախսի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	21%
13.	Հաշվին մուտք եղած գումարների տրամադրման/հասանելիության ժամկետ	առավելագույնը հաջորդ աշխատանքային օրը
14.	Թաղման նպաստի և կենսաթոշակառուի մահվան պատճառով չստացված կենսաթոշակի գումարների կանխիկ վճարում (առանց Շահառուի ընթացիկ կամ քարտային հաշվին մուտքագրվելու)	անվճար
15.	Թաղման նպաստի և կենսաթոշակառուի մահվան պատճառով չստացված կենսաթոշակի գումարների կանխիկ վճարում Շահառուի կողմից նշված ընթացիկ կամ քարտային հաշվին մուտքագրվելուց հետո	համաձայն տվյալ պահին Բանկի կողմից կանխիկացման համար սահմանված միջնորդավճարի
16.	Կենսաթոշակառուի/նպաստառուի ՀՀ-ում լինելու հանգամանքը հավաստող հայտարարագրի առաքում	Երևան քաղաքում – 800 ՀՀ դրամ ՀՀ այլ մարզերում – 1.500 ՀՀ դրամ